



ԱՐՄԱՆԻՈՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

թիւ 27969
նոյեմբեր 25, 1982

Հոգեշնորհ

ՏՌ Փառէն Ե. Վրդ. Աւետիքսուն

Հովիւ Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ

նախազան ծրագրն Խորհուրդի

Սառւլիքիւս.

Ակրեւի Հայր Փառէն,

Այսու գիրով կը յայտնենք թէ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներուն եւ անոնց անձնափոխանորդներուն համար, թեմական կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներուն համաձայն, եւ 1981 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հացէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 15, 1983, որպէս զի կարելի ուլլայ հրաւիրել զիրենք թեմական Պատգամաւորական ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 5-7, 1983, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Փէյլըս Հայթց հլւինոյի Ս. Յովակիմ եւ Աննա Հայց. Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, ծխական նորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 28138
Մարտ 22, 1988

Հոգեշնորհ

Տ. Ժառէն օ. Վրդ. Աւետիքեան
Հովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախազան ծիսական Խոր Խուրդի
Մառւթիլա.

Միրելի Հայր Ժառէն,

Սահած ենք տեղեկագիրները համայնքի ծիսական ժողովին, որ ձեր նախազանութեամբ գումարուած է ֆեարուար 11, 1988ին:

Այսու գիրով կը վաւերացնենք ծիսական Խոր Խուրդի նորընտիր անդամները, բայ ստորև արուած ցանկին:

Հանեցէք փուլով Առաջնորդարան դրկել ծիսական Խոր Խուրդի նորընտիր դիւնի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւները:

Կուրիննեց ծիսական Խոր Խուրդի նոր կազմը եւ ձեզի ու ձեր պաշտօնակիցներուն կը մաղթնենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան աարի մը՝ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ ի հոգեւոր շինութիւն համայնքի մնը սիրեցեալ ժողովուրդին:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՎԻՒՆԿՈՎՈՍ
Առաջնորդ

Արքըր Արքարեան
Ճորճ Գրոս
Էտուրլատ Գորգոյեան
Արթըր Մարտիկեան
Աշոր Թորոսեան

Թիւ 28714
Սեպտեմբեր 5, 1984

Հոգեշնորհ
Տ. Ժառէն ս. Արդ. Աւելիքան
Հովհաննէս Մկրտչ Ծկեղեցւոյ
Սառւթիւն.

Սիրելի Հայր Ժառէն,

Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Շորք Արք. Գալուստան Նա-
մակով մը մեզի կը նաղարդ որ ծրագրած է այս տարուան աշնան Միացեալ
Նախագաներ այցելել՝ յիշելով նաև իր այցելելիք քաղաքները եւ քուա-
կանները:

Համաձայն վերոյիշեալ նամակին՝ Պատրիարք Սրբազն Հայրը Հոկտեմ-
բեր 18-21 Տիթրոյթ պիտի այցելէ:

Նորին Ամենապատւութեան փափազն է որ Կիրակի Հոկտեմբեր 21ին
Ս. Պատրիարք Մատուցանէ Ս. Յովհաննէս Մկրտչ Ծկեղեցւոյ մէջ, եւ Պա-
տարագէն եաց հաւաքական սեղան մը կազմակերպուի:

Պատրիարք Սրբազն Հօր այս փափազը փախնցելով ծեզի՝ մեր Անդա-
դրութիւնն է որ անհրաժեշտ կարգադրութիւնը ընեց պատրամօրէն ընդու-
նելու համար Թուրքիոյ Հայոց Պատրիարքը:

Եսզի կը մաղթենք քաջառողջութիւն եւ աստուածանոյ ձեր զործե-
րուն յաշողութիւնը

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՉՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՅԻ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28753

Սեպտեմբեր 7, 1984

Մեծայարդ

Տիար Մարգիս Գրիգորեան

Ս. Աստուածածին Եկեղեցւոյ
ծխական Խոր Հուրդի Ատենապետ
Էլպրոն.

Յարգելի Տիար Գրիգորեան,

Նկատի ունենալով որ Հայ ժողովուրդին Վիճակուած ցեղասպանութեան 70-ամեակն է
յաջորդ տարի, պաշտօնապէս՝ 1985-Ը Մեծ Եղենի նԱՀԱՏԱԿԱՑ ՏԱՐԻ՝ կը յայտարարենք:

Այս որոշումը տրուած է գլխաւորաբար վայել յարգանքը մատուցանելու համար մեր
քիւրաւոր նահատակներուն՝ որոնք իրենց կեանքը զոհեցին որպէս զի Հայ ժողովուրդը
պղրի պատուով եւ ծակատաբաց, եւ նոյն ատեն յատուկ ծեռնարկներով ու ոգեկոչման
հանդիսութիւններով փառաբանելու համար բազմաչարչար Հայ ժողովուրդի հրաշալի վե-
րածնունդը:

Թեմական Խոր Հուրդի նիստին մէջ առնուած որոշումին համաձայն՝ մեր փափաքն է որ
մեր համայնքները, քոյր յարանուանութիւնները, ինչպէս նաև մշակութային, բարեսի-
րական եւ հայրենակցական միութիւններն ու կազմակերպութիւնները բերեն իրենց մաս-
նակցութիւնը այն ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻՆ, որ որոշուած է կազմել:

Այս գրութեամբ հրաւէր կ'ուղենք ձեզի եւ կը խնդրենք որ բարեհաճիք համայնքին
կողմէ մէկ ներկայացուցիչ մը որկել առաջին խոր հրդակցական հանդիպումին, որ տեղի
պիտի ունենայ Երեքշաբթի Սեպտեմբեր 25, Երեկոյեան ժամը 7.30ին, Առաջնորդարանի
դահլիճին մէջ:

Բարի եղէք ձեր ներկայացուցիչին անունը տեղեկացնել Առաջնորդարանի տնօրէն Տիար
Մեսրոպ Գերմեանին՝ հեռածայնելով Առաջնորդարանի գրասենեակը, մինչեւ Սեպտ. 20, 1984:

Մեր նահատակներուն բարի յիշատակը յարգելով՝ անգամ մը եւս մենք ուխտած կ'ըւ-
լանք հաւատարիմ մնալ մեր պատմութեան, հաւատքին, ժողովուրդին եւ Մայր Հայրենիքին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻԿԱՆՈՊՈՍ
Առաջնորդ

Թթւ 29082
Յունիս 4, 1985

Մեծայարգ

Տիար Զաւէն Կոստանդնուպոլիս
Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
օքական Խորհուրդի Առենապետ
Հեյվերհիլ.

Ցարզելի Տիար Կոստանդնուպոլիս,

Ինչպէս աեղեկացուցած ենք՝ ժեր համայնքին առլիք մեր այցելութեան
Յունականը պիար ՌԼԼայ 1985 Կոկանմբեր 14-15 շաբաթավարչը:

Բարի եղէք Նկանի ուննաւ յիշեալ թռականը եւ մեր այցելութեան առ-
բիւ օքական Խորհուրդիդ կարգադրութիւնները անզեկացնել մեզի:

Ենզի եւ օքական Խորհուրդիդ անդամներուն կը ժաղինք առաւել ջաշա-
ռողջութիւն եւ Եկեղեցանուեր ժեր աշխատանքներուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

**ՔՐԴՅԱՆ ԱՐԵՍՎԱԿԱԴԻՄԻ
Առաջնորդ**



ԱՐՄԵՆՈՂՈՅԻՑ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29936

Օգոստոս 19, 1986

Արժանաշնորհ

Տ. Հայկ Ա. Քինյ. Տօնիկեան
Օգնական Հովիւ Ս. Ցովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիթրոյթ.

Սիրելի Տէր Հայկ,

Նկատի առնելով մեր թեմի հոգեւորականներէն ոմանց ինքնակամ արարքները, փոփոխութիւն մտցնելու մեր Եկեղեցւոյ ծիսական եւ կարգապահական սովորոյթներուն եւ աւանդութեանց մէջ, հետեւեալ հրահանգը կը յանձնենք մեր լուրջ ուշադրութեան:

Կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու աւարտին աշխարհական անձանց քարոզի փոխարէն՝ վկայութիւն տալու՝ նորոյթը:

Նաեւ կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու ընթացքին կին մարդերու մոմակալութեան եւ այլ պաշտօններ տալը, բացի երգեցիկ դասին անդամութենէն եւ չին Կտակարանի եւ Առաքելոց Թուղթերու ընթերցողութենէն:

Կ'ազդարարենք մեզ զգուշանալ արարքներէ որոնք կրնան պարտաւորել մեզ կարգապահական ծանր որոշումներ առնելու:

Կը յանձնարարենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք վերոյիշեալները, ինչպէս նաեւ նախապէս տրուած հրահանգները, զորս այս կերպով մեր ուշադրութեան յանձնել պարտաւորեցին մեզ՝ մեր թեմի հոգեւորականներէն ոմանց արարքները: Անոնց անձնապէս եւս զգուշացուցած ենք:

Կ'աղօթենք որ Տէրը իր իմաստութեամբ առաջնորդէ իր սուրբ Եկեղեցւոյ սպասաւորները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29259
Ապրիլ 8, 1986

Հոգեշնորհ

Տ. Փառէն ծ. Վրդ. Աւետիքեան

Հովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ

Նախազան ծխական Խորհուրդի

Տիթրոյթ.

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք Մարտ 25, 1986 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հա-
ղորդէք թէ ձեր նախազանութեամբ Փետրուար 28ին գումարուած համայնքիդ ծխա-
կան ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրու-
թիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած
անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները,
ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղե-
ւանի անդամոց անունները, հասցէնները եւ հեռածայնի թիւերը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեի պաշտօնակիցնե-
րուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայ-
ծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեց-
եալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Մայքրլ Պլաքեան
Ալպերթա Կոտոշեան
Արմէն Յովհաննէսեան
Քրանք փուլիս
Անտրիւ Դարբինեան
Քազար Թըրթըրեան

Թիւ 29197
Փետրուար 14, 1986

Հոգեշնորհ
Տ. Շառէն օ. Վրդ. Աւետիքեան
Հովիւ Ս. Ցովիաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Տիթրոյթ.

Միրելի Հայր Շառէն,

Ստացած ենք Ցունուար 14, 1986 թուակիր ժեր նամակը, որով մեզ կը հրաւիրէք այցելելու ժար համայնքը՝ Եկեղեցւոյ 55-ամեակին առթիւ:

Միրով կ'ընդունինք ժեր հրաւէրը: Հեռածայնային մեր վերջին կարգադրութեան համաձայն՝ 1986 Խկանքի 6-7 շաբաթավիրքը կը վերապահնենք Տիթրոյթի Ս. Ցովիաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ մեր համայնքի այցելութեան:

Բարի եղէք մամանակին մեզ տեղեակ պահել մեր այցելութեան կապակցութեամբ օխական Խորհուրդիդ կարգադրութեանց մասին:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՁԵՎԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 29249
Մարտ 18, 1986

Նորին Սուլբ Սծութիւն
Տէր Տէր Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Սայդ Արքու Սուլբ Էջմբածին.

Կահավար Տէր,

Առաջարան Յակոբ Տէրտիւնան, Տիգրոյբէն, որ ապրինսր առած ստացած Եր
Զերդ Սրբութեան Կոնդակն ու Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանը, մեզի տեղն-
կացուցած է որ ցաւալի արկածով մը կորսնցուցած է իրեն շնորհուած շքանշ-
շանը:

Տիար Տէրտիւնան կը փախաթի գրանալ իէ Կարելի՞ է արդիոք Արկուրդ
շքանշան մը ունենալ՝ պաշտօնական առիթներով իր կուրծքին վրայ կրելու հա-
մար:

Շնորհակալ պիար ըլլանք երէ Զերդ Սրբութիւնը քարհանք այս մասին
առդնկացնել մեզի:

Առաջիւմք ի համբոյր Կենիք Սծեալ Աշոյն
Հոնարհաբար

ԹԱՐԳԱՄ ԱՐԵՎԱԿԱՆԻ
Առաջնորդ

Թիւ 29249
Մարտ 18, 1986

Նորին Առւրը Օծուրիւն
Տէր Տէր Կազմէն Առաջին
Արքազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Առւրը Էջմիածին.

Վեհապատճեն Տէր,

Ժամանական Ցակոր Տէրաւեան, Տիրայիւն, որ տարիննոր առաջ ստացած էր Զերդ Արքութեան Կոնդակն ու Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանը, մեզի անդեպուցած է որ ցաւալի արկածով մը Կարսնցուցած է իրեն շնորհուած շքանշանը:

Տիար Տէրաւեան կը փափաքի զիանալ թէ կարելի՞ է արդեօք երկրորդ շքանշան մը ունենալ՝ պաշտօնական առիթներով իր Կուրօքիլն վրայ կրելու համար:

Ենթադրական պիտի ըլլանթ եթէ Զերդ Արքաւերիւնը քարեհամբ այս մասին տնդեկացնել մեզի:

Սատարիմք ի համբայր Վեհապատճեն Աջոյն
Առաջնարդ

ԹՈՐՅԱՆ ԱՐՁԵՎԻՍԿՈՎՈՒ
Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29905

Օգոստոս 19, 1986

Հոգեշնորհ

Տ. Փառէն ծ. Վրդ. Աւետիքեան
Հովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Սառւթիլտ.

Սիրելի Հայր Փառէն,

Նկատի առնելով մեր թեմի հոգեւորականներէն ոմանց ինքնակամ արարքները, փոփոխութիւն մտցնելու մեր Եկեղեցւոյ ծիսական եւ կարգապահական սովորոյթներուն եւ աւանդութեանց մէջ, հետեւեալ հրահանգը կը յանձնենք մեր լուրջ ուշադրութեան:

Կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու աւարտին աշխարհական անձանց քարոզի փոխարէն ``վկայութիւն տալու`` նորոյթը:

Նաեւ կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու ընթացքին կին մարդերու մոմակալութեան եւ այլ պաշտօններ տալը, բացի երգեցիկ դասին անդամութենէն եւ Հին Կտակարանի եւ Առաքելոց Թուղթերու ընթերցողութենէն:

Կ'ազդարարենք ձեզ զգուշանալ արարքներէ որոնք կրնան պարտաւորել մեզ կարգապահական ծանր որոշումներ առնելու:

Կը յանձնարարենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք վերոյիշեալները, ինչպէս նաեւ նախապէս տրուած հրահանգները, զորս այս կերպով մեր ուշադրութեան յանձնել պարտաւորեցին մեզ՝ մեր թեմի հոգեւորականներէն ոմանց արարքները: Անոնց անձնապէս եւս զգուշացուցած ենք:

Կ'աղօթենք որ Տէրը իր իմաստութեամբ առաջնորդէ իր սուրբ Եկեղեցւոյ սպասաւորները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



ԱՐՄԵՆՈՂՈԹՈՒԽ, ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29988
նոյեմբեր 18, 1986

Հոգեշնորհ

Տ. Փառէն ծ. Վրդ. Աւետիքեան

Հովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ

Նախազան ծխական Խորհուրդի

Սառըթիւտ.

Սիրելի Հայր Փառէն,

Այսու գիրով կը յայտնենք որ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներու եւ անձնափոխանորդի համար, թեմական կանոնադրութեան 14-դ եւ 54 յօդւածներուն համաձայն, եւ 1985 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ծեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէնները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 16, 1987, որպէս՝ զի կարելի ըլլայ հրաւիրել զանոնք թեմական Պատգամաւորական ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 7-9, 1987, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Սփրինկֆիլտ Մասսաչուսէցի Ս. Մարկոս Հայց. Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովհաննէս, ծխական Խորհուրդի ատենապետին եւ ատենադպիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագիրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ



1. - 2. - 3. - 4. - 5. - 6. - 7. - 8. - 9. - 10.

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30173
Ապրիլ 3, 1987

Հոգեշնորհ
Տ. Փառէն ծ. Վրդ. Աւստրիքսան
Հովիւ Ս. Յովիաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախազահ ծիսական Խորհուրդի
Սառւաչիւթ.

Սիրելի Հայո Փառէն,

Ստացած ենք Մարտ 20, 1987 թուակիր ծեր տեղեկագիրը, որով կը հա-
ղորդեք թէ ծեր Նախազահութեամբ Փետրուար 27ին գումարուած համայնքիոյ ծխա-
կան ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրու-
թիւնը, եւ Ներկայացնելով քուեարկութեան արդիւնքը՝ կը ինդրէք ընտրուած
անձերու վաւերագման պաշտօնագիրը:

Այսու զիրով կը վաւերացնենք ծխական Խոլինուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէնները եւ հեռածայնի թիւները:

Օրինելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ծեզի եւ ծեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Ապրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՒ Առաջնորդ

Էտուըրս Գորզոյեան
Արշի Եղիսեան
Վահրամ Փանքազեան
Քաթի Մէքնեան
Առնոր Արգարեան



ԱՐՄԵՆՈՂՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30414
Ապրիլ 25, 1988

Հոգեշնորհ
Տ. Փառէն Ս. Վրդ. Աւետիքէան
Հովհաննես Սկրտիչ Եկեղեցւոյ
Նախագամ Ծխական Խորհուրդի
Սառութիւն.

Սիրելի Հայր Փառէն,

Սուացած ենք Ապրիլ 7, 1988 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր մախագամութեամբ Մարտ 4ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւմքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորև տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անդամները, հասցէները եւ նեռաձայնի թիւերը:

Օրինելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունեութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մէր սիրեցէալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Էլիզապէթ Արքահամեան
Արմէն Յովհաննեան
Տակլըս Դաքէսեան
Ղազար Թրթրեան
Ռիչըրտ Թորիկեան
Չարլզ Եսայեան



ԱՐԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30794
Ապրիլ 4, 1989

Հոգեշնորհ

S. Փառէն Ծ. Վրդ. Աւետիքեան

Հովհի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Սառըթիլտ.

Սիրելի Հայր Փառէն,

Ստացած ենք Մարտ 30, 1989 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր Ասխագահութեամբ Մարտ Յ-ին գումարուած համայնքիդ Ծխական Ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի հիմք ամդամոց ընտրութիւնը, եւ ներկայացմէնով քուէարկութեան արդինքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի ամդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւները:

Օրմնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդինաւոր գործունեութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մէր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունի

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
Առաջնորդ

Փիթլը Եղիկեան
Վահրամ Ֆանթագեան
Անն Լաքեան
Անոշ Բարեկեան
Ռիշլը Վահրատեան



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 30962
Սեպտեմբեր 8, 1989

Հոգեշնորհ

S. Փառէն Մ. Վրդ. Աւետիքէան

Հոգեւոր Հովի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Սառութիւն:

Սիրելի Հայր Փառէն,

Հոգ. S. Սամուէլ Արդ. Աղոյեանի Արևմտեան Թեմէն մեր թեմը տեղափոխուելու մասին
Արևմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. S. Վաչէ Արք. Յովսէփեան իր համաձայնութիւնը յայտնած
է:

Սուացած ենք նաև Հայր Աղոյեանի դիմումնագիրը, որով փափաք կը յայտնէ մեր թեմը
տեղափոխուիլ:

Թեմական Խորհուրդի նիստին մէջ նկատի առնուեցաւ այս հարցը եւ որոշուեցաւ ընթացք
տալ Հայր Աղոյեանի փափաքին:

Նկատի ունենալով որ Հայր Աղոյեան 1990 Յունուարին պիտի տեղափոխուի, համաձայն իր
համակիճ, այսու գիրով այդ թուականէն սկսեալ Հոգ. S. Սամուէլ Արդ. Աղոյեանը կը
նշանակենք Օգնական Հովի Սառութիւն Միշիկընի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ:

Բարի եղէք հաղորդակցութեան մէջ մտնել Հայր Սուրբին հետ եւ անոր տեղափոխութեան
կապակցութեանը վերջնական կարգադրութիւնները ընելէ ետք տեղ եկացնել մեզի:

Զեզի եւ Ծխական Խորհուրդի անդամներուն կը մաղթենք առաւել քաջառողջութիւն եւ
եկեղեցամուէր ձեր բարի գործերուն յաջողութիւն:

Սիրոյ Ողջուանի

ԹՈՂԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՄ
Առաջնորդ